


ՏԱՐԱԶԸ ԼՈՅՍ Է՝ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

**№ 11 կիրակի մարտի 26** | **վեցերորդ տարի 1895**

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Լրագիրներից լմացանք, որ շուտով Մոսկւայում պէտք է սկսի լոյս տեսնել մի նոր գրականական հանդէս «Խօսք» վերնագրով։ Վաղուց է արդէն նոյն Մոսկւայում գոյութիւն ունէ մի ուրիշ հանդէս «Գրական-գիտական և պատմական» վերնագրով, որ մերթ նիրհում է, մերթ լոյս է տեսնում անկանոն։ Մի ուրիշ գրականական հանդէս—«Արաքսը»—հրատարակւում է Պետերբուրգում։ Իսկ անցեալ տարւայ վերջից սկսեց հրատարակել Թիֆլիսում մի նոր հանդէս—«Հորիզոնը»։

Այսպիսով «Խօսքը», եթէ չենք սխալւում, թւով չորրորդ հանդէսը պէտք է լինի ռուսահայերի մէջ։ Կայ և մի ուրիշ ժողովածու, որ երբեմն լոյս է տեսնում Թիֆլիսում «Թատրոն» վերնագրով։ Բայց նա նւիրւած է բացառապէս թատրոնին, իսկ մի այդպիսի հրատարակութիւն մեզ համար առ այժմ մի աւելորդ բեռն է։ Մի հասարակութեան մէջ, ուր չկայ ոչ թատրոն, ոչ բեմ և ոչ նոյն իսկ մի քիչ թէ շատ կանոնաւոր դերասանական խումբ, մի թատրոնական հանդէս չի կարող աջողութիւն ունենալ։

Այլ են գրականական հանդէսները։ Այս կողմից նրանց ասպարէզը անհամեմատ մեծ է։ Գրականութիւն ասած բանը ինքն ըստ ինքեան մի ընդարձակ աշխարհ է, որ ամփոփում է իր մէջ և զուտ գրականութիւնը, և թատրոնականը, և երաժշտականը, և գիտնականը, և մանկավարժականը, և գեղարւեստականը, ամեն ինչ, որ կարող է վերաբերւել հասարակական մտքի և զգացումների թէօրետիկական զարգացմանը։ Գրականական հանդէսները ոչ միայն աւելորդ չեն մեզանում, այլ և վերին աստիճանի անհրաժեշտ մի պիտոյք են։

Կէս դարուց աւելի է նորագոյն հայ գրականութիւնը գոյութիւն ունէ և արդէն իր համար ստեղծել է մի այնպիսի ամուր հիմք, որին ոչ մի անցողիկ կամ յարատև խոչընդոտ չի կարող քայքայել կամ խախտել։ Հայերը կարդալ սովորել են և սիրում են։ Այլ բան է, թէ մեծամասնութեան մէջ դեռ մինչև այժմ տիրում է ձրի կարդալու ամօթալի և խայտառակ սովորութիւնը, բայց թէ հայերը ընթերցասէր են, այդ հերքել չի կարելի։ Այն ինչ՝ կարդալու բան մենք դեռ շատ քիչ ունենք։ Մեր ինքնուրոյն գրականութիւնը հազիւ տարեկան երկու-երեք ընթերցանութեան արժանի գիրք է արտադրում։ Գալով թարգմանականին, նրա վիճակը աւելի վատ կլինէր, եթէ չը լինէր Հրատարակչական ընկերութեան վերջին եր-

կու տարւայ համեմատաբար եռանդուն գոր-

ծունեւթիւնը։ Բայց այն էլ, որ տալիս է այդ ընկերութիւնը, դեռ շատ և շատ քիչ է, համեմատելով ռուսահայերի ընթերցանութեան պահանջին։ Ինչ վերաբերում է հայ պարբերական մամուլին, ասել, թէ այդ մամուլը ընթերցանութեան նիւթ է տալիս—կընշանակէ պարզամիտներին մոլորեցնել։ Առ հասարակ առօրեայ անցողիկ լուրերով զբաղուող պարբերական թերթերը ոչ մի ազգի մէջ ընթերցանութեան համար լուրջ նիւթ մատակարարող աղբիւր չեն համարուում, ուր մնաց հայ մամուլը։

Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ մեր թերթերը ամենից քիչ մտածում են ընթերցողի լուրջ մտաւոր պահանջների մասին։ Եւ նրանք միջոց ու կարողութիւն էլ չունեն մտածելու։ Նրանց համար մի անցողիկ առօրեայ խնդիր, մի դպրոցական վէճ, մի երէցփոխի ընտրութիւն, կամ մի ժամհարի գողութիւն աւելի մեծ նշանակութիւն ունէ, քան թէ գրականութիւնը։ Եւ այդ շատ բնական է, հասկանալի գուցէ և ներելի. դպրոցական մանր մունր վէճերը, երէցփոխի ընտրութիւնը կամ ժամհարի գողութիւնը թէև չնչին, աննշան բաներ են հասարակական մոքի ընդհանուր զարգացման տեսակէտից, բայց օրւայ խնդիրներ են, և լրագիրը նոյն իսկ պարտաւոր է նրանցով կերակրել իր ընթերցողներին։

Այսպէս է հայ մամուլը։ Ահա ինչու այսօր հայ ընթերցողի գրականական ճաշակը այնքան փչացել և աղաւաղւել է, որ նա անխտիր ամեն մի գրչով գրւած և մուրով տպւած բան գրականութիւն է համարում, լինի նա իսկապէս մի գրականական գործ, թէ մանր-մունր թղթակիցների կամ յօդւածագրերի շաղփաղփանք։

Հէնց միայն այս հանգամանքը, այն է հայերի մէջ գրականական ճաշակի բացակայութիւնը աչքի առջև ունենալով, մենք անհրաժեշտ ենք համարում զուտ գրականական հանդէսների երևան գալը։ Այդ հանդէսները շատ գործ ունեն կատարելու, և առաջին նրանց գործը պէտք է լինի՝ հոգալ հայի գրականական ճաշակի կրթութեան մասին, աշխատել բացատրել հային, թէ ինչ է իսկապէս գրականութիւն ասած բանը։ Իսկ դրա համար նախ և առաջ անհրաժեշտ է մի անգամ ընդ միշտ երես դարձնել այն սխալ և վնասակար ուղղութիւնից, որին հետևում են մեր պարբերական օրգանները գրականութեան վերաբերմամբ։ Կուսակցական ոգին օգտաւէտ է միայն հասարակական գործերի վերաբերմամբ, բայց երբ նա զուտ գրականութեան մէջ է խառնւում, սկսում է վնասակար դառնալ։ Գրականութիւնը բարձր է ամեն մի կուսակցութիւնից։ Նա ոչ ձեզ է պատկանում, ոչ ինձ, նա ամենի սեպհականութիւնն է։ Եւ երբ մեկը, կուսակցական նեղ հոգուց դրդւած, ձեռք է բարձրացնում նրա վրայ, աններելի յանցանք է գործում։ Բացի դրանից, զուտ գրականութեամբ պարապւող մարդը իր արւեստի մէջ չէ կարող կուսակցական լինել և եթէ եղաւ, կընշանակէ գրականութեան բարձր ոյժը և վեհութիւնը չէ ըմբռնում։ Այդպիսին արժանի չէ զուտ գրականական ոյժ կոչւելու։ Մեր ասածը նա մանաւանդ արդարացի պէտք է համարել բանաստեղծական գրականութեան վերաբերմամբ։

Կուսակցական այն նեղ, սահմանափակ և անհամբերող ուղղութիւնը, որ տիրում է մեր մամուլի մէջ, միանգամայն թշնամի է զուտ գրականութեանը։ Դա մի այնպիսի իրողութիւն է, որ ապացոյցների կարօտ չէ։ Բաւական է յիշել մի քսմնելի փաստ, որ ամեն օր կրկնւում է մեր աչքի առջև, և մարդիկ այժմ այնքան սովորել են նրան, որ ոչ միայն չեն վրդովւում, այլ և ներողամտաբար ժպտում են։ Ահա այդ փաստը։—Լոյս է տեսնում մի գիրք, և հեղինակը կամ թարգմանիչը, ընդունած սովորութեան համեմատ, ուղարկում է մի մի օրինակ խմբագրութիւններին։ Առաջին պայմանն՝ մեր թերթերի ղեկավարները նայում են գրքի ճակատին. ո՞վ է գրել։ Եթէ հեղինակի կամ թարգմանչի անունը համակրելի է կուսակցական տեսակէտից, գիրքը դովւում է, իսկ եթէ ոչ—կեղտոտ ջուրը պատրաստ է և իսկոյն կը թափւի գիրք յօրինողի գլխին։ Այս պատճառով շատ անգամ արժանաւորը ոտնատակ է լինում, ցեխոտւում, իսկ անարժանը, բթամիտը փառաբանւում։ Այս իսկ պատճառով հայ ընթերցողների (քանի որ նրանք ինքնուրոյնութիւն չունեն) գրականական ճաշակը օրից օր փչանում է և անբարոյականանում։

Ահա հէնց այս քսմնելի ախտից պէտք է հեռու լինեն մեր գրականական հանդէսները, եթէ ուզում են իրանց արժանաւորութեան բարձրութեան վրայ կանգնել։ Եւ այժմ ժամանակ է նոյն իսկ այդ ախտը արմատախիլ անելու։ Դա հասարակութեան զարգացած և խելացի մասի պահանջն է, որ մենք միայն արտայայտում ենք։

Մի քանի խօսք էլ այն մասին, թէ որքան լաւ կամ վատ է, որ մեզանում այժմերը բաժանւում են և գրականական հանդէսները շատանում։

Մենք այդ երևոյթի մէջ ոչ մի վատ բան չենք տեսնում: Ընդհակառակը, մենք օգտաւէտ ենք համարում այդ: Եւրոպայում ամեն օր նորանոր հանդէսները են լոյս տեսնում, և ոչ մի խելքը գլխին մարդ չի ընդդիմանում նրանց, եթէ միայն լաւ նպատակով են հրատարակւում: Նրանք լոյս են տեսնում, մրցում են միմեանց հետ, և որը լաւ-թանակը տանում է, նա ապրում է: Մոնոպոլիան ամեն մի ասպարիզում պախարակւած է: Իսկ գրականութեան մէջ մոնոպոլիա մտցնելը անբարոյականութիւն է: Ամեն մի անհատ կարող է իրան միւսներից խելօք համարել, բայց ոչ ոք իրաւունք չունի ուրիշին ասելու «դու այդ գործը մի անիլ, որովհետև ես անում եմ արդէն»:

---

«ՔՐԻՍՏՈՍ ԴԷՊՍԵՄԱՆԻ ԱՑՈՒՄ»

I

Հանգիստ էր առնում
Փրկիչն աշխարհի
Զարուրթեան ձայնից
Հեռացած վայրում,
Ուր չէին հասնում
Լացն ու ազաղակ,
Զարամիտ մարդկանց
Գործերն անառակ:
Ուր խուռ շըշուկը
Նենգամիտ գործին
Չէր հասնում Նըրա
Սուրբ լսելիքին:

II

Բայց մթթէ գիտէր
Ամբոխը մոլի
Ամբողջ ծանրութիւնն
Իր արարմունքի:
Գիտէր թէ արդեօք
Ինքն ո՛ւմ էր առում,
Ո՞ւմ անարգաբար
Խաչ էր բարձրացնում:
Ո՛չ. խուժանն անարգ
Զարանենգ հոգւով
Ձեռք բարձրացրեց
Իր Աստուծու վրայ,
Եւ երբէք չըզգաց
Ո՛ւմ էր ապտակում,
Դառն տանջանքով
Ո՛ւմ էր սպանում:

III

Եւ Փրկիչն այնտեղ
Ծառերի միջին,
Իր վերջին օրւայ
Աղօթքի ժամին
Յիշեց Գողգոթան...
Նըրա վեհ հոգուն
Զգալի եղաւ
Վշտի ծանրութիւն...
Եւ պատկերացան
Նրա առաջին
Խոր անարգանքը,
Փշեղէն գափնին:
Խաչի ծանրութիւնն
Զգալի եղաւ,
Ամբոխի թուքը
Ծանր թըւեցաւ...
Եւ մի հառաչանք
Ծանր, վշտալից՝
Դուրս թըռաւ նրա
Սիրառատ սրտից:

IV

Հասաւ Գեթսեման:
Խորին գիշեր էր...
Մեղմ սոսափիւնով
Կանաչ տերևներ
Զայնակից եղած
Մէկի սուրբ ողբին՝
Յուսահատ մի երգ
Մրմընջում էին:
Քաղցր կարկաչը
Ջինջ Յորդանանի՝
Մի վիշտ էր գուժում,
Մի վիշտ ահալի:
Դալար ծառերի
Խիտ կատարներից
Անցնում էր ահով
Մի բարակ քամի:
Բարձր արմաւենին
Դարևոր երգով
Մոլի աշխարհին
Օ՛ր օր էր երգում,
Հինաւուրց այգին
Գաղտնի սարսափով
Լսում էր Փըրկչի
Խօսքերը վերջին:

V

Աչքերը երկինք,
Ձեռքերը խաչած,
Եւ ներող հոգւով
Երկինք ամբարձած՝
Վերջին խընդրքով
Նա Հօրը դիմեց,
Անգութ ամբոխին
Թողութիւն խնդրեց:
Նա ներեց,—ներեց
Հալածողներին,
Ներեց խաւարի
Զար զաւակներին.
Եւ անմեղ սըրտի
Մրմունջը վերջին՝
Նոր կեանք պարգևեց
Համայն աշխարհին:

VI

Անարգ խուժանը
Բիրտ աղաղակով
Գիմեց շտապով
Դէպի Գեթսեման.
Սիրոյ Քարոզչին
Սըրով Նա խոցեց,
Սուրբ ճշմարտութեան
Մեծ Առաքեալին՝
Իբրև աւազակ
Խաչ բարձրացրեց...

Պ. ՄՈՍՅՈՒԵԱՆՑ

# ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

(Շարունակութիւն)

— Այսօր ձեզ մանրամասն կը բացատրի գործարանի մեքենապետը, ասաց օրիորդը, որի հետ կը ճանաչեցնեմ ձեզ, իսկ ես միայն համառօտ կարող եմ բացատրել։ Ա.... գետի վրայ, որը քառասուն վերստի չափ հեռու է և դիրքով մեր գիւղից տասնևհինգ սաժէն ցածր, ունենք երկու նաւաձև շինութիւն, որոնց վրայ յարմարեցրած են անիւներ և որոնց ստոտում է հէնց ինքը՝ գետի ընթացքը, իսկ անիւների առանցքների երկու կողմում կան կենտրոնաշեղ անիւներ և սրանց վրայ երկաթեայ ձողեր, որոնք քաշում հանում են ջուրը խողովակների միջով մինչև հարկաւոր բարձրութիւնը։ Աւելի հասկանալի լինելու համար, պատկերացրէք ձեզ ջրահանի կազմը։ Եւ ահա բարձրանալով ջուրը խողովակների միջով, այնտեղից ընթանում է որոշուած ճանապարհով դեպի մեզ՝—գործարանը, ըստ ստում ձեր տեսած անիւը, յետոյ անցնում հեռու, ստեղնում քսանի չափ աղօրիքները և այն բոլոր սկզբնաշարժ անիւները, որոնք կան գիւղի զանազան մասերում այլ և այլ նպատակներով, և այդ բոլորից յետոյ, ուղարկւում են նրանք դէպի այգինները, դաշտերը և խիստ դժւար աշխատանք են գործ դրել, նոյն իսկ յուսահատեցնելու չափ, բայց այժմ նրա տւած օգուտները մեկին հարիւր արդէն վարձատրել է և բոլորովին մոռացնել տւել գործ դրւած դժւան աշխատանքը։ Դա մեր գիւղի կեանքի հանգրւանի գլխաւոր հիմքն է կազմում...

Օրիորդը դեռ չէր վերջացրել, երբ մեր ուշադրութիւնը գրաւեց մի մեքենայի ճարճատ ձայնը։

— Նորաւարտ կալսելու մեքենայ է, պ. Սպիրեան, փորձում են, մօտեցէք նայելու, ասաց նա։

Մենք մօտեցանք մեքենային, որի մօտ կանգնած էր երիտասարդ մեքենապետը (և որի հետ ծանօթացրեց ինձ օրիորդը)։ Մեկը վերևի կողմից գլորում էր խուրձերը ամբողջութեամբ և մեքենայի ակռայացից որկորը կլանելով նրանց, ջարդում էր մի ակնթարթում։ Ես չկարողանալով նկատել նրա ներսում կատարւած գործողութիւնը, միայն կարողանում էի նշմարել, որ մեքենայի մի կողմից թափւում էին ցորնի մաքուր հատիկները, իսկ միւս կողմից ներսից փչող ուժեղ քամին դուրս էր մղում մանրած, փափկացրած յարդը։

Ես Եւրոպայում տեսել էի կալսելու մեքենաներ՝ դեռ իմ ուսանողութեան ժամանակ, որոնց կազմը այնպէս չէր, ինչպիսին այստեղ էի նկատում, բայց կատարում էին նոյն դերը, միայն այն տարբերութեամբ, որ այնտեղ փոխանակ յարդի, դուրս էր մղւում միայն երկար ու կոշտ ծղօտները, և երբ ես այդ նկատեցի, մեքենապետը ասաց.

— Այդտեղ մեքենաները առ հասարակ տեղային հանգամանքներին են յարմարեցրած, որոնք մեր կողմերում կարող էին անպէտք համարւել։ Ինչպէս յայտնի է, այնտեղ յարդի կարիք չի զգացւում, իսկ մեզ մօտ այդ կարևոր է։ Մեր դաշտերից այնքան խոտ չէ ստացւում, որով կարելի լինէր անասուններին կերակրել միայն դրանով։ Մանաւանդ երկիրը, որ խոտ ստանալու յոյսով պէտք էր ուրիշ բուսեղէն ցանելուց ազատ լինէր, մենք ընդհակառակը, պէտք չզգալով խոտի, դրա փոխարէն մշակում ենք այնպիսի բոյսեր, որոնք անհամեմատ օգուտ են տալիս։ Սկզբում, քանի ընկերութիւնն այդ մեքենան չէր հնարել, նեղւում էինք. մենք չէինք կարող եւրոպական մեքենայով գործ տեսնել, որովհետև, ինչպէս դուք ևս նկատել էք, նա յարդ չէ պատրաստում, այլ միայն ծղօտները, որոնցով մեր անասունները չէին կարող կերակրւել։ Մենք փորձեցինք ծղօտները առանձին վերածել յարդի, բայց տեսանք որ կրկնակի և դժւար աշխատանք է այդ. ուստի մեր ընկերութիւնը մի քանի անգամների եռանդուն աշխատանքի շնորհիւ՝ հնարեցինք այդ մեքենան, որը բացի մեզ օգտակար լինելուց, հետզհետէ տարածւում է շրջակայ նոյն իսկ հեռաւոր գիւղերում։ Մենք քանի նահապետական ձևովն էինք հնձում և կալսում, ստիպւած էինք շատ անգամ մարդահասակ արտերը հնձել բարձրից և թողնել դաշտում նրանց ծղօտները, որպէս զի կալսելու ժամանակ չըշղթայւի այն դժոխային աշխատանքը, որը դեռ տիրապետում է մեր գիւղերում՝ յատկապէս նրա համար, որ հեշտութեամբ հատհան լինեն հասկերը։ Նշանակում է՝ կորչում էր անասունների սնունդի մեծագոյն մասը։ Սակայն շնորհիւ նորահնար մեքենայի, այժմ արտերը հնձւում են գրեթէ արմատից և այն ոչ մանդաղհունձ, այլ մեքենաներով, որոնք նոյնպէս պատրաստւում են մեր գործարանում։ Մեզ մօտ անասունների սնունդը այնքան է աւելանում, որ ստէպ է պատահում, երբ հարևան գիւղացիները նեղւելով՝ օգտւում են սրանից, և ինչպէս տեսնում էք, այդ յարդը բոլորովին նման չէ այն կոշտ յարդին, որով սովորաբար կերակրւում են շրջակայ գիւղերի անասունները, այլ կակուղ, մետաքսանման։—Այդ ասելով նա թեքւեց առաւ յարդից և առանձին հաճոյքով ցոյց տւեց ինձ։

—Սակայն որտեղից են այդ ցորենի խուրձերը, չէ որ դեռ խոտհարի ժամանակ է, հարցրի ես։

—Սրանք դեռ անցեալ, նոյն իսկ նրա նախընթաց տարիներից մնացած են։ Երբ առատ է լինում հունձը և արտահանումը կանգ է առնում զանազան պատճառներով կամ վերջապէս ուրիշ կարևոր գործով ենք զբաղւած լինում, այդպիսի դէպքերում խուրձերը ժողովում ենք դէպանման և երբ հարկաւոր է լինում, իսկոյն մեքենայի բերանը տալով, կարճ միջոցում կարողանում ենք վերածել մաքուր հասիկների։ Մեզ համար նշանակութիւն չունեն եղանակները, ինչպէս շրջակայ գիւղերի համար, որոնք տարւայ մի որոշ ժամանակում միայն կարող են այդ աշխատանքը կատարել, քանի որ պայմանաւորւած է այդ նահապետական ձևով։

Այնուհետև մեքենապետը բացատրեց, որ իրանց գործարանում շինւում են գիւղատնտեսական շատ տեսակ մեքենաներ և գործիքներ։

— Օրինակ ահա այս, սկսեց նա ցոյց տալով, որ տաշւում է, ձիթհան մամուլի համար է, ահա այս և այն գինեգործութեան համար են, ողկոյզները չանչահան անելու և շիրան ճնշելու։ Այնտեղ, բամբակի բոյսերը կճեպից զատելու. ահա այդ հունձի մեքենայի օձապտոյտ ուղին է, որի միջով շրջող թևերը գանում են իրանց ուղին։ Այստեղ խոտհար մեքենայի մասերն են պատրաստւում։ Սրանդ նորահնար աղօրիքի մասերն են, որը համեմատարար քիչ ուժ է պահանջում՝ քան մինչև հիմա եղածները, բայց շատ արդիւնք տալիս։ Իսկ դա մետաքսագործութեան մեքենան է, որը դեռ կատարելագործութեան կարօտ է...

Յանկարծ օրիորդը դիմեց մեքենայապետին, երբ սա վերջին մեքենան ցոյց էր տալիս, և հետաքրքրութեամբ հարցրեց.

—Պ. Մինասեան, (մեքենապետի ազգը այդպէս էր), Պօղոսեանը ու Իսրայէլեանը ինչ են շինում, մի բան կարողացա՞ն անել։

— Մի դժւարութեան յաղթել են, թելերը առաջւայ պէս այլ ևս չեն նկատւում. միւս դժւարութեան էլ յոյս ունեն յաղթելու, պատասխանեց մեքենապետը։

—Ուրեմն պէտք է նրանց շնորհաւորել, հիացմամբ բացականչեց օրիորդը։

Մենք նայեցինք և միւս բազմաթիւ բաժանմունքները, ուր առանձին բնաւորութիւն ունեցող առարկաները էին շինւում։

—Ընկերութիւնը մտադիր է, ի միջի այլոց ասաց մեքենապետը, նաև ճիւղեր բաց անել մանր արդիւնաբերութեան, որոնք անհրաժեշտ էին մեր երկրում շինութիւնների, կահ-կարասիքի և տնային արդիւնաբերութեան օժանդակ գործիքների համար։ Նա ուսումնասիրել է այդ առարկաների պատրաստութեան եղանակները և գտել, որ մեր պատրաստածները կարելի է ահագին զիջումով արտահանել մեր երկրի զանազան կողմերը։ Այդ ճիւղերից առ այժմ մենք բաց ենք արել տան կահ կարասիքի բաժանմունքը, որտեղ, որպէս սկիզբը գործի, պատրաստւում են ճիպոտահիւս կարասիք, որոնցով նաև կահաւորւած է մեր գիւղի ամբողջ տները և որոնց նմուշը՝ գուցէ դուք նկատել էք արդէն, եթէ պ. Արաքսեանի տանն էք իջևանել։

—Մթթէ դրանք ևս այդտեղ են պատրաստւել։

—Այո, մեզ մօտ, և գիտէք, վերին աստիճանի հեշտ գործ է։ Փայտը և ճիպոտները ստանում ենք մերձակայ անտառներից շատ չնչին գնով, համեմատելով նրանց շահագործութեան արդիւնքի հետ։ Մենք սկզբում անճանօթ էինք այդ գործին և չէինք կարող օգտւել բնութեան գրեթէ ձրի բարիքից. ուստի ընկերութիւնը երկու երիտասարդներ ուղարկեց արտասահման, որոնք կարճ միջոցում սովորելով դարձան, և նրանց շնորհիւ այսօր ունենք այդ մասի մի ընդարձակ ճիւղ, թէև կատարելագործութեան կարօտ։ Այդ ամբը, յարմար և արժան գին ունեցող կարասիքից՝ այժմ սկսել են օգտւել և շրջակայ գիւղերը. բայց դա, մեծ քանակութեամբ արտահանում ենք և զանազան քաղաքներ, ուր շատերը գերադասում են ամենահոխ պատրաստւած կարասիքից։

—Մենք ունենք այ՛ և կանանց մատչելի արհեստների բաժանմունքներ, պատասխանեց օրիորդը իմ հարցին, որտեղ պատրաստւում են թէ մեր սեղհական պէտքերի և թէ արտահանութեան համար։ Օրինակ, մենք ահագին քանակութեամբ արտահանում ենք կանանց և տղամարդկանց ձղոտահիւս գլխարկներ, նուրբ գործւածներ, զանազան զգեստներ և շատ ուրիշ առարկաներ, որոնց դուք անշուշտ կրտեսնէք։

—Բայց գուցէ դուք յոգնել էք շատ ոտի վրայ կանգնելուց, շարունակեց օրիորդը՝ քնքոյշ հեգնութեամբ...

Յիրաւի, գործարանի բոլոր բաժանմունքները տեսնելու համար քիչ ժամանակ չէր պահանջւում. չընայելով բաւականի երկար ժամանակ էր անցել, ես դեռ շատ բան չէի տեսել։ Որքան էլ հետա-

քրքիջը նորութիւններով շրջապատած լինէի, այնու ամենայնիւ պէտք էր խոստովանել, որ օրիորդի նկատողութիւնը ճիշդ էր։ Եւ նա, չըսպասելով իմ պատասխանին, ասաց.

—Բարձրանանք ահա այն շինութեան վերնայարկը, ուր խիստ հով է և ախորժելի հանգըստանալու համար։

Մենք մտանք մի ընդարձակ այգու մէջ, որտեղ և գտնւում էր օրիորդի ցոյց տւած շինութիւնը և բարձրացանք նրա ընդարձակ պատշգամբի վրայ. մեզ ուղեկցեց և մեքենապետը։ Այստեղից գեղեցիկ տեսարան էր բացւում։ Ընդարձակ և վերին աստիճանի կանոնաւոր այգին՝ պատկանում էր այդ շինութեան, իսկ այդ երկուսն էլ, ինչպէս ես յետոյ իմացայ, գործաւորների համար էր պատրաստած։ Ծաղիկների և ծառերի միջով ճիւղաւորւած ուղիները թաւակոխւած էին ծառերի հարուստ և թարմ սաղարթով։ Այստեղ պիտի ճեմէին և հանգիստ վայելէին շինութեան մէջ ապրող գործաւորները, պիտի զով և մաքուր օդ շնչէին՝ աշխատանքի ազատ ժամերում։

Օրը, տօթալի էր և խիստ ցանկալի պատըշգամբում նստել, վայելել այգու բուսական եթերով լեցուն զովութիւնը և որպէս կրկնակի մխիթարութիւն, վայելել օրիորդի և մեքենապետի հաճելի խօսակցութիւնը։ Ես իմ գլխում շարել էի ահագին քանակութեամբ հարցեր և չըգիտէի ինչպէս դասաւորել նրանց,—որն առաջ, որը յետոյ առաջարկել։

—Ցանկալի էր իմանալ, վերջապէս առաջարկեցի ես, քանի պայմաններ ունէք մշակած գործարանի և առհասարակ արդիւնաբերութեան վերաբերմամբ, որոնք և որոշէին գործաւորների և ընկերութեան յարաբերութիւնները։

—Մեր պայմանները բոլորովին նման չեն այն պայմաններին, որոնք տիրապետում են մասնաւոր սեպհականութեան գործարաններում, բացատրեցին նրանք. և դա շատ բնական է, որովհետև գործաւորները՝ հէնց իրանք ընկերութեան անդամներից են շատերը, ուրեմն ղեկավարութեան մասնակից. չընայելով նրանք մի որոշ չափ չէզօք բնաւորութիւն ունեցող պարտք և իրաւունք են վայելում։ Ընկերութիւնը ընտրում է իրանցից և այն ի հարկէ, ձեռնհաս անդամներից մի յանձնաժողով՝ որոշ ժամանակով և յանձնում ընկերութեան բոլոր գործերը։ Սրանք իրանց հերթում մասնաժողովների միջոցով հոգում են տնտեսական բոլոր պէտքերը,—ընդունում են գործաւորները, որոշում են նրանց արժանաւորութիւնը, հսկում են գործերի կանոնաւոր կատարելուն, ընդունում են պատւէրները, գնահատում են և բոլոր իրանց գործերի համար մանրամասն հաշիւ են ներկայացնում ընկերութեան։ Ինչպէս գիտէք, մեր դպրոցում, որը դուք դեռ չէք տեսել, ի միջի այլոց աւանդւում են և արհեստներ։ Անխտիր՝ կարող են ընդունել թէ ընկերութեան անդամների և թէ մասնաւոր ցանկացողների զաւակները։ Երբ սրանք աւարտում են և եթէ կարիք է զգացւում գործարանում կամ այն բոլոր հիմնարկութիւններում, որոնք ընկերութեան են պատկանում, կարող են ընդունել անխտիր և դա կախւած է մասնաժողովի իրաւունքից, այսինքն, նրանք են որոշում, ունե՞ն այդ հիմնարկութիւնները կարիք թէ ոչ։ Ընբրանք, որոնք ընկերութեան անդամներ չեն, ստանում են միայն որոշւած վարձատրութիւնը, իսկ ընկերութեան անդամներ-գործաւորները, բացի նոյն վարձատրութիւնից, ի հարկէ և այն վաստակից, որ ունենում է գործարանը։

—Դուք ասացիք որ վարձատրութեան չափը որոշում է մասնաժողովը. արդեօք՝ քիչ եղանակով է առաջնորդւում այդպիսի դէպքերում։

—Նա, ի նկատի է ունենում երեք գլխաւոր պայմանները, այն է՝ ընդունակութիւն, ջանասիրութիւն և պահանջ։ Պատահում է, որ մի գործաւորը միւսից աւելի ընդունակութիւն է ցոյց տալիս, գործի թէ որակութեան և թէ քանակութեան մէջ. այդ դէպքում, ի հարկէ առաջնի վարձատրութիւնն աւելի է լինում քան երկրորդինը. սակայն այդ երկրորդը, եթէ նկատւում է՝ որ ոչ մի ջանք չէ խնայում մրցելու առաջնի հետ, բայց բնութեան շնորհած ընդունակութիւնները մատնում են նրան, այդ դէպքում վարձատրութեան չափը լինում է համեմատաբար աւելի, յամենայն դէպս ոչ պակաս քան նրա անհրաժեշտ պահանջն է։ Ինչ վերաբերում է ծոյլերին կամ պարտաւորութիւնից խոյս տուողներին, այդպիսիները մանրամասն քննութիւնից յետոյ վռնդւում են. բայց այդ գրեթէ չէ պատահում, որովհետև նախ մանրամասն քննութիւնից յետոյ են ընդունւում, երկրորդ, գործաւորների վայելած այն դիւրութիւնները և ընկերութեան դէպի նրանց տածած յարգանքը, գրգռում է նրանց ինքնասիրութիւնը և ստիպում երախտահատոյց լինել։

—Ո՞րքան է աշխատելու ժամերի թիւը։

—Ութ ժամ է։ Եւ դրանից աւել ընկերութիւնն անվայել է գտնում, որովհետև գործաւոր-

ները, բնական է, ունեն և ուրիշ պահանջներ, որոնց հարկաւոր էր նոյնպէս ժամանակ։ Բայց եթէ ուշադրութեամբ դիտէք և համեմատէք այդ ութ ժամը ուրիշ գործարաններում տիրապետող տասն և երկու ժամ աշխատութեան հետ, կըհամոզւէք, որ մեր ութ ժամեայ աշխատութիւնն աւելի արդիւնաւէտ է, քան տասն և երկու ժամեանը։ Երկարատև՝ բայց գժոխային պայմաններով ջլայատաւած աշխատութիւնը՝ ուժասպառ է անում գործաւորին մի կողմից, միւս կողմից վիրաւորում նրա ինքնասիրութիւնը, դրդում դէպի վրէժխնդրութիւն, այն է չըգործել կանոնաւոր, քանի որ աշխատանքը չէ գնահատւում մարդավայել կերպով։ Այնտեղ գործաւորը զզւանք է զգում դէպի գործը և գա շատ բնական է, իսկ մեզ մօտ ընդհակառակը, նա իր ֆիզիքական անսպառ և միշտ վերանորոգւող ուժի շնորհիւ գործում է ամենայն եռանդով և նրա մի ժամը հաւասար է ուժասպառ գործաւորի երեք ժամին։ Երևակայեցէք ձեզ մի խնջոյք կամ հանդէս, ուր նւագում է մարդու ջղերը գրգռող ախորժելի երաժշտութիւնը և հրաւիրում պարել. ճիշտ այդպէս էլ պիտի լինի գործաւորի վերաբերութիւնը դէպի գործը։ Նա պէտք է սիրէ աշխատութիւնը և գործի ինքնաբերաբար և ոչ բռնի։ Ոչ թէ գործը պիտի յաղթահարի և ուժասպառ անի գործաւորին, այլ գործաւորը գործին։ Այդ հանգամանքները ի նկատի ունենալով ընկերութիւնը, շինեց ահա այդ հսկայական շինութիւնը, որտեղ ցանկացող գործաւորը կարող է ունենալ բնակարան՝ բոլոր յարմարութիւններով։ Այստեղ կըլինի և ընթերցարան և դասախօսութեան ու այլ հանդէսների համար մեծ դահլիճ. իսկ դիմացը, ահա այն շինութիւնը՝ բաղանիք։ Կըլինի և ճաշարան՝ մատչելի և թարմ կերակուրներով։ Ահա այս ընդարձակ ծառաստանն էլ որոշած է որպէս ընդհանուր զբօսավայր։—

Օրիորդը և մեքենապետը իրանց պատմութեամբ կենդանացրին չիշողութեանս մէջ մի շարք ցաւալի պատկերներ՝ գործարանական կեանքից, որոնք արդիւնք էին անգթութեան, անմարդասիրութեան։

Ես պաշտօն էի վարել մի քանի գործարանական քաղաքներում, ուր գործարանատիրոջ անյագ տենչանքն է գործաւորների արիւն-քրտինքով հարըստանալու, առանց խղճահարւելու և փոքր ի շատէ մարդավայել յարմարութիւններ ստեղծելու նրանց համար։ Ես տեսել էի այն գժոխային աշխատանքը, մութ, ցուրտ ու խոնաւ շինութիւնների մէջ, այն մուրն ու կեղտը և նեխած օդը որոնք տիրապետում էին այդ գործարաններում։ Տեսել էի թէ ինչպէս գործաւորը կեղտի մէջ թաղւած, քրտինքը ծորալիս, յուսահատ դէմքի արտայայտութեամբ՝ սպասում է մխիթարիչ երեկոյին, թէ երբ կարձակեն, կազատեն գործից։ Դիտել էի՝ թէ ինչպէս բանւորը թուլացած մի կերպ ընկնում է իր կացարանը՝—խուցը, գրեթէ անզգայ, մտածողութեան ընդունակութիւնից զուրկ, ապուշ դարձած, շատ անգամ առանց լւացւելու իրար եաւից կուլ է տալիս անանուխդ կերակուրը և մտնում կեղտոտ, սևացած անկողինը և խոպոն ննջում՝ որպէս մի մեռած մարդ։ Գիտէի որ այդ ողորմելիները առաւօտը շատ վաղ բայ են անում աչքները նկատելու՝ արդեօք պատուհանի ճեղքից՝ կամ երդիկից չէ թափանցել ազօտ լոյսը։ Ո՜հ չարագուշակ լոյս... արդէն նա երևում է, ժամանակ է վեր կենալու։ Բայց ինչպէս նա չէ ուզում վերկենալ, ախ ինչ լաւ է դեռ քնել... նրա ճպատած անդամները դեռ չեն հանգստացել դժոխային աշխատանքի ծանրութիւնից, նա այդ րոպէին իր տասնեակ օրերի արիւն քրտինքով վաստակած վարձատրութիւնը նոյն իսկ կըտար, դէթ մի երկու ժամ աւելի քնելու, իր թուլացած անդամները հանգստացնելու համար։ Բայց անողոք պահանջը հարկադրում է նա կրծում է նրա ներքին աշխարհը... նա վեր է կենում և մի քանի րոպէ էլ անկողնի մէջ նստած ննջում... նրա աչքերի կոպերը ծանրացած են լինում արիւնով, նրանք անզգայաբար խուփ են գալիս... Սակայն հարկաւոր է վեր կենալ, արդէն լոյս է. բայց ախ ինչպէս տաք ու ախորժելի էր. ինչպէս լաւ էր անկողնի տակ, թեկուզ սևացած և գարշահոտ... Նա մեկնում է ձեռները դէպի հագուստը, բայց նրանք չեն հնազանդւում իրան, ախորժելի «ճկլտանք է» զգում նրանց մէջ... Վերջապէս վեր է կենում և միայն նոր է զգում որ ուշացել է։ Նա դարձեալ շատ անգամ առանց լւացւելու՝ վազում է գործարան, ուր անողոք գործակատարը յայտնում է՝ որ նա ուշացել է «տասը րոպէ» և մի «քառորդ օրւայ» վարձ տուգանքի է ենթարկւում...

Ես այդ բոլորը նկարագրելով նրանց, աւելացրի թէ ինչքան բախտաւոր ու մարդավայել կեանք է տիրապետում այստեղ, երբ պատկերացնում եմ այն գժոխային կեանքը։

—Գիտեմ, գիտեմ, պ. Սպիրեան, պատասխանեց, ի միջի այլոց, յուզւած օրիորդը, ես անձամբ նոյնպէս տեսել եմ, բայի այդ, հայրս մի ժամա-

նակ գտնելով այնտեղ և այն գաժան աշխատանքից նոյնպես բաժին հասած լինելով, լաւ ծանօթ է և ինձ մանրամասն նկարագրել է։

—Դուք նկարագրեցիք ձեր գործարանական կեանքը, այժմ կը ցանկայի լսել ձեր հողատիրութեան և արդիւնաբերութեան եղանակը. արդեօք՝ այդ էլ համայնական բնաւորութիւն ունի։

—Հողատիրութեան եղանակը գրեթէ նոյնն է, ինչ որ գոյութիւն ունի և ուրիշ գիւղացիների համար, ասաց մեքենապետը։ Իւրաքանչիւր արդիւնաբերութիւն, որ անմշակ բնաւորութիւն ունի և ստացւում է անմիջապէս երկրից, համարւում է իւրաքանչիւր հողատիրոջ սեպհականութիւնը, ինչպէս և նրանց մշակումը իւրաքանչիւրի առանձնական պարտաւորութիւնը։ Ստացած հում բերքերի մշակումը, եթէ տերը ցանկանում է, հաշւով տալիս է ընկերութեան զանազան հիմնարկութիւններին (որոնց մի անդամն էլ ինքն է ի հարկէ) և այնտեղից դարձեալ հաշւով ստանում՝ մշակած, որոշ վարձ վճարելով ընկերութեան, կամ թէ՝ հենց սկզբնական դրութեան մէջ՝ վաճառում է ընկերութեան։ Այնպէս որ, հողատիրութիւնը և նրանից ստացած արդիւնքը՝ բոլորովին կապ չունի այն հիմնարկութիւնների հետ, որտեղ մշակւում են հում նիւթեր և որոնք պատկանում են բոլորին—համայնքին։ Ուրիշ խօսքերով՝ երկիրը և նրանից ստացած հում բերքը՝ անպայման անհատական սեպհականութիւն է, իսկ հիմնարկութիւնները և նրանց մէջ մշակած նիւթերը պայմանական անհատական սեպհականութիւն...—

Գործարանի զանգակը հնչեց. ճաշի ժամանակն էր։ Մենք չուզենալով մեքենապետի ժամանակը աւելի երկար խլել, շնորհակալութիւն յայտնեցինք և հրաժեշտ տալով՝ խնդրեցինք նրա կրկին տեսակցութիւնը...

ՍԱՓԻՐԵԱՆ

(Վերջը միւս անգամ)

---

## ԳԻՏՈՒԹԻՒՆ

### ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ *)

*Բարոյական հսկանների ծագումը*

### I

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Դեռ սրանից մի քանի տարի առաջ խօսելով բարոյական զարգացման և կամ առհասարակ առաջադիմութեան մասին, այդ բաները համարում էին անկախ առարկաներ, առանց կապելու ֆիզիօլոգիայի, այսինքն մարդկային օրգանիզմի կազմութեան հետ, գլխաւորապէս նեարդերի (nerf) հետ։ Իսկ այժմ բնական գիտութիւնների զարգացման շնորհով, օրինակ, հոգեբանութիւնը անցնում է բիոլոգիայի (կենաբանութեան) շարքը։ Մարդու, ինչպէս և կենդանու բոլոր «գիտակցական մասը», այսինքն, տպաւորութիւն, զգացողութիւններ, ցանկութիւններ, կրքեր, բանականութիւն կախած են նեարդա-ուղեղային վանդակիկներից և նրանց գործունէութեան արդիւնք են։ Այդ շատ պարզ է, որովհետև եթէ մենք չունենանք տպաւորող և մշակող գործարանները, ոչ արտաքին տպաւորութիւնները կարող ենք ստանալ և ոչ էլ նրանց հետևանքը արտայայտել։ Ուրեմն և ուղղակի անմտութիւն է, ինչպէս ամեն բան, նոյնպէս և բարոյականութիւնը քննել անկախ կերպով, առանց ֆիզիօլոգիայի, մանաւանդ նեարդային վանդակիկի յատկութեան հետ կապելու։

Իսկ այդ վանդակիկի ամենաակզբնական յատկութիւնն է ագգիւմիւլասիօն (accumulation), այսինքն նեարդերի գործունէութեան ակտերի ժողովելը և պահպանելը։ Ինչպէս որ ֆոսֆորականութիւն ունեցող առարկաները ընդունակ են պահելու կամ յիշելու ստացած լոյսի ճառագայթները (օրինակ լուսատիպ), նոյնպէս և նեարդերը ընդունակ են յիշելու ստացած տպաւորութիւնները։ Այդ յիշողութիւնը, այսինքն ձգտումը իր մօլեկուլեաը*) կազմութեան մէջ պահպանելու առաջացած ֆիզիօլոգիական թրթռումները (vibration) և որոշ կերպ նրանց դասաւորելու, լինում է գիտակցական և անգիտակցական։

Նեարդերի մէջ առաջացած ամեն մի ակտ նրանց մէջ թողնում է փուխկիօնալ մի ծիլ, որը յետոյ հեշտացնում է այդ ակտի կրկնութիւնը, նոյն իսկ առաջացնում է այդ ակտը։ Այդ կերպ հեշտանալով, նա շատ անգամ դառնում է մեքենայական. նեարդերը ձեռք են բերում հակումն, ինստինկտ, պահանջ։ Մեր բոլոր սովորութիւնների հիմքը սա է։ Այս բոլոր ակտերը և նրանց կրկնութիւնները ոչ մի կապ կամ կախումն չունին գիտակցական կամ անգիտակցական հասկացողութիւններից և այս վերջիններս միայն գո-

---

*) Տես «Տարազ» № 10։

*) Մոլեկիւլ (molécule) կընչանակի մասնիկ, զընդակիկ։ Ամեն մի նեարդ կազմած է անթիւ այդպիսի զնդակիկներից կամ վանդակիկներից, իրըև մի հիւսուածք։

*Ովճգաթակաց զոյգ*

յուԹիւն ունին աւելի բարձր կազմակերպուԹեան տէր կենդանիների մէջ և այն էլ հոգեկան աւելի նուրբ զգացողուԹիւնների ժամանակ։ Բոլոր անողնաշարների մէջ անգիտակցական դրուԹիւն է տիրապետում։ Միջատների մասերը իրարից (segment) բաժանելուց յետոյ կարողանում են առաջացնել շատ բարդ շարժումներ (մրջիւնները)։ Նոյնը նկատւում է և կենդանիների, նոյն իսկ մարդկանց մէջ (Թուք արտադրելը, շնչառուԹիւնը, արեան շրջանառուԹիւնը)։

Սրա պատճառը այն է որ երջանիկ հիմնական ակտերը շատ հին ծագումն ունին, ամենասկզբնական նախահայրերից սկսած և անԹիւ սերունդների մէջ, անդադար կրկնուելով, ենԹարկուել են մշակման, և նեարդերի հետքերը, որոնք ղեկավարում են այդ ակտերը, զարմանալի բելիֆ կերպով տպաւորուած են նեարդային հանգոյցների վանդակիկի մէջ։ Այդ անգիտակցական հետքերի խանգարումը չէ կարող առանց կորստաբեր հետեւանքի մնալ։

Այսպէս ուրեմն ամեն մի զգայական տպաւորուԹիւն, ամեն մի մօլեկուլեար շարժում, որ ուղեղի մի մասից անցնում է միւս մասը, ամենափոքը ուղեղային բջակցիա, որ սահում է շարժող նեարդերի միջով, իրանից յետոյ փոփոխուԹիւններ է Թողնում գործող նեարդային տարրերի մէջ, յիշողուԹեան նման մի բան, որի կրկնակի առաջացումը նոյնքան աւելի հեշտ է լինում, որքան յաճախ որ նա կրկնուում է*)։ Բայց այս առանձին անհատների վերաբերմամբ, որն ունենում է և մի ուրիշ հետևանք սերունդների կեանքի մէջ։ Երբ նեարդային որոշ հետքեր երկար կրկնուԹիւնների շնորհով արդէն բաւական կազմակերպուել են կենդրոնների մէջ, նրանք ոչ Թէ միայն կրկնուում են մի անհատի օրգանիզմի մէջ այլ և հաղորդուում են ժառանգաբար։ Նոյն օրէնքին են ենԹարկուում նաև բարոյական հակումները։ Ամեն մի անհատի բարոյականուԹիւնն արդիւնք է իր նախորդների մէջ մարմնացած ձգտումների և իր հերԹին ամեն մի անհատ կարող է բարոյականացնել կամ անբարոյականացնել իր սերունդը, ինչպէս որ ինքը բարոյականացել կամ անբարոյականացել է իր նախորդներից։

Այս կերպ է կազմուում մարդու բնաւորուԹիւնը (caractère)։ Ամեն մի օրգանիզմ նախորդ օրգանիզմների արտադրուԹիւն լինելով, նրա նեարդային համակարգուԹիւնն էլ կրում է իր մէջ իբրև հակումներ իր արտադրող նեարդերի կազմակերպած ձգտումները։ Այնուհետև այդ հակումներն անհատի կեանքի մէջ աւելի զարգանում են, կրելով նաև զանազան փոփոխուԹիւններ անմիջական ստացած տպաւորուԹիւններից։ Որքան էլ այդ անմիջական տպաւորուԹիւնները շատ և բազմատեսակ լինին, այնուամենայնիւ նեարդերի հիմնական հակումները միշտ յաջորդում են ժառանգաբար։ Դրանից է որ զանազան ընտանիքներ բոլոր անդամները կրում են որ և է մի բնաւորոշ գիծ։

ԲարոյականուԹեան ծագումը (générotion) հասկանալու համար անշուշտ կարևոր է իմանալ այս հիմնական ճշմարտուԹիւնները, որովհետև բարոյականուԹիւնն ոչ այլ ինչ է, եԹէ ոչ սովորուԹիւն, իսկ սովորուԹիւնները կազմուում են արտաքին տպաւորուԹիւններից և նեարդերից։

ԵՐ. ՊԱԼԵԱՆ

*) Maudsley Physiologie de l'esprit.

---

## ՏԱՃԿԱՀԱՅԻ ՆԱՄԱԿԱՆԻՆ

### I

1890 Թ. օգոստոսի 24-ին Ե***

ԱՒ ՎԱՀԱՆ ԱՂԱՔՍԱՆԴՐԱՆ

Հողվրդի

Անոյշ Վահանս,

Անցեալ չաբաԹ փոստին յանձնեցի մի նամակ, որով նշանուիլս աւետում էի ձեզ օր. Սրբուհի Ղազարոսեանի հետ։

Գուցէ սպասում ես, որ սրանով էլ քեզ հրաւիրում եմ մեր հարսանիքին. ճշմարիտ է, այնպէս կըլինէր, եԹէ իրերը նոռմալօրէն ընԹանային։

Այս առաւօտ՝ եղբայրս հեկեկացի է գնացել, Թաղականներից իմացել է, որ ոտիկանապետը մեր Թաղի քէհեայինն է դիմել իմ հաւնչէն իմանալու համար։

Երևակայիր՝ չար լուրի ազդեցուԹիւնը եղբօրս՝ Զարմայրի վրայ. չնչասպառ վերադառնում և եղելուԹիւնը յայտնում է տանը. մայրս ուշաԹափ կըլինի, իսկ հայրս ու եղբայրս, առանց լոպէ կորցնելու և առանց ինձ սպասելու, ԹղԹերս ու գրքերս կըխուզարկեն և անխնայ կրակին կըյանձնեն ազգային հեղինակների գործերը, իմ գրած մի քանի գրուԹիւնները, բոլոր ԹղԹակցուԹիւներս և ի միջի այլոց նշանածիս գողտրիկ նամակները։

Առաջին անգամ չատ վրդովեցայ նրանց ընԹացքից, բայց նրանց տւած բացատրուԹիւնից իսկոյն համոզուեցայ։

Տնեցիք միաբերան խնդրում և պնդում են, որ իսկոյն Թողնեմ իմ հայրենիքը և հետևանամ, գնամ օտար աշխարհ կեանքս փրկելու համար, բայց ես ոչ մի յան-

ցանք չունիմ։ Դրանք դարձեալ պնդում են, որ այժմ չնորհիւ ժամանակին չատ անմեղ մարդիկ անյայտացել են. կենդանի մնացողների հասցէն, իսկ մեռածների գերեզմանատեղին անգամ յայտնի չէ։

Ծնողացս առաջ բերած հարիւրաւոր վաստերի և իմ լսած անթիւ դէպքերի առաջ թէև չլարուում և չփոթուում եմ, բայց այնուհանդերձ՝ պէտք է լռեմ անխելք թիւրքերի խելօք առածներից մէկին թէ՝ «Գիչերները յղի են». ով գիտենայ ընչեր կընծնեն մինչև առաւօտ. ուրեմն մինչև վաղը կորոշւի իմ ինչ անելը։

Սիրելի Վահանս, եթէ պարագայներ ինձ հակառակ են և դէպքերը նպաստաւոր չըլինեն, ի նկատի ունեցիր, որ ամեն հիղն ի գործ պէտք է դնես, չընկնայելով ոչ աշխատութիւն, ոչ էլ փող իմ իրաւունքները պաշտպանելու համար։

II

Անգին Վահանս,

Իրանց մեզ երկար ժամանակ բացակայ գտընուողների նախազգացումով, բոլոր յանձնարարութիւններս կատարեցի և սպասում եմ ահեղ բոպէին. ոստիկանական խուզարկութիւնը համանիշ է դատապարտութեան։

Առ երես արիութիւն ցոյց տալով հանդերձ չափազանց վրդոված եմ, մի զարմանար յուզուելուս, դէպքերի ազդեցութեան ներքև թոյլն արիանում, քաջը վհատում է։

Նշանակելէս յետոյ, կարծես բոլորովին փոխուել եմ։ Սիրել սկսելուց յետոյ, առաւել փաթաթուել եմ կեանքին. ինչքան զգացուններս վաւիկացեր քնքոյշներ են, այնքան այժերս թուլացել են. ես որ կեանքն արհամարհում էի, ես որ աչխարհի դժւարութեանց վստահ էի յաղթել, հիմի բոլորովին վհատել եմ, կարծում եմ որ իմ կրած որ և է պատուհասիները կամ զրկանքը, նչանածիս ապագայ ապերջանկութեանը պատճառ կըլինի։

Տակաւին դու չես կարող զգալ՝ թէ ինչ զօրեղ և մոգական ազդեցութիւն ունի պաշտած աղջկայ արտասուքի կաթիլները, մանաւանդ երբ նա գաղտուկ լալիս է չըյուզելու համար իրան սիրածին։

Սրբուհիի խնդրանաց չըկարողացայ դիմադրել, պատրաստուել էի մեկնել, երբ Թաղի քէհեան մեզ մօտ եկաւ. չեմ իմանում իրը ազդասէր, թէ իրը լրտես. այնքան չատացել է լրտեսների թիւը, որ մարդիկ իրանց տներումն անգամ միմեանց հետ խօսելու ժամանակ առածի կարգ անցած այս խօսքը յաճախ կրկնում են՝ «խնդրեմ կամաց խօսիր, մեր օրով պատերն էլ ականջ ունին»։

Թողունք մեկդի, որ լրտեսում ենք եկեղեցիներում, չոգենաւներում և հասարակական տեղերում, նոյնպէս լրտեսում ենք փողոցներում և մեր տներում։

Լրտեսներն էլ իրանց կարգին, լրտեսում են ուրիշ լրտեսներից։

Քէհեան ինձ իմացրեց, որ այս երեկոյ կամ վաղը, ինքը մի քանի պոլիցիեկաններն հետ, պէտք է գայ մեր տունը խուզարկելու, եթէ թղթերիս և զրքերիս մէջ՝ կառավարական չահերին հակառակ կամ յեղափոխական բաներ կըգտնէին, խորհուրդ տուեց ինձ՝ նախ քան պաշտօնական խուզարկութիւնը՝ մի անդամ աչքէ անցնել գրադարանս։

Այս անակնկալ խուզարկութեան պատճառը, փընտրեցի իմանալ սրանից, ոչինչ չըկարողացաւ ասել։ Արամադրեցի նրան մի գումար, որ ծախսելով՝ կարողանայ լուծել մեզ հանելուկը. մի խօսքով անուղղակի կերպով կաշառեցի քէհեան։

Ժողովուրդի և պոլիցիականների միջև միջնորդի դեր կատարում են հիմի մեր քէհեաններն էլ։

III

Աղնիւ Վահան,

Հազիւ կէս գիչերին ինձ մօտ վերադարձաւ քէհեան ժպիտն երեսին և կէս հարբած. հաչիւ տուեց իր աչխատութիւնների մասին, նկարագրեց թէ ինչ դժւարութիւններով յաղթած է իրանց հետ գինետուն տանել մի քանի գլխաւոր պոլիցիականներ, թէ ինչ վարպետութեամբ հարբեցրել է նրանց և նրանցից օգտակար տեղեկութիւններ է քաղել. երկար ատենաբանութիւնից յետոյ հասկացրեց որ, թէև իմ մասին ոչ մի տեղեկութիւն չէ կարողացել քաչել պոլիցիականներից, բայց չատ ճարտար միջոցներ է ձեռք բերել, որոնցից կարելի է օգտուել ապագայումը՝ եթէ երբեք ես բանտարկուեմ։ Քէհեան հաւատքով ինձ համոզում է, որ այս երկրում կարելի է կախաղանից մարդ ազատել, միայն հարկաւոր է միջոցները իմանալ։ Ինչքան մարդիկ եմ ազատել, ասաց, այս տարի, ոստիկանութեան նախարարի կառավարին, նոյն ժողովրդի նախագահի խոհարարին, գինեվաճառ Նօրքիի և մանր մուներ ոստիկանների միջնորդութեամբ։

Երևակայեցէք ասում է, նախարարը սիրելուց աւելի վախենում է իր կառավարչից, դի մի գուցէ կաչառելով, իր կեանքը վտանգի ենթարկէ. նախագահը վախենում է իր խոհարարից թունաւորելուց, իսկ մանր-մուներ ոստիկաններ, առանց ժողովուրդի պաքչիշների, չեն կարողանար ապրել, քանի որ տարւայ մէջ, հազիւ մեկ կամ երկու անգամ ամաթաչակ են ստանում։

Դուք հանդիստ կարող էք քնել, ինձ թողէք կարգադրել ամեն բան, քանի որ ես իմանում եմ ոստիկանական գաղտնիքները. դուք անհոգ կացէք, միայն գործը յաջող տանելու համար չունեցրի ընտրանը երբեմն երբեմն մեկ մեկ ոսկոր նետել հարկաւոր է։

Փող, փող դարձեալ փող։

Յաւէտ քոյդ ՎԼՈՅՐ ԳԱՐԵԳԻՆ

(Կըշարունակուի)

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ

Նորերումս վրացիների մէջ միտք է յղացել՝ կազմել մի գրականական ֆոնդ վրաց կարօտ հեղինակներին նպաստելու նպատակով։ Այդ միտքը յղացաւ վրացիների մէջ հայերից մի մի քանի տարի յետոյ։ Բայց ինչպէս երևում է, նրանք կիրագործեն գովելի գաղափարը աւելի շուտ, քան հայերը։ Ինչպէս հաղորդում է „Նօվ. Աբ.“ լրագիրը, վրաց մէջ գրագիտութիւնն տարածող ընկերութեան վարչութիւնը արդէն կազմել է ֆոնդի կանոնադրութիւնը և այս օրերս պէտք է ներկայացնի Թիֆլիսի նահանգապետի հաստատութեանը։

Սրևի ընթերցողները չեն մոռացել, որ մի այդպիսի կանոնադրութիւն կազմել է հայկական ֆոնդի համար մի առանձին մասնաժողովի ձեռքով։ Մասնաժողովը իր յանձն առած պարտականութիւնը կատարեց և ընդհանուր ժողով հրաւիրեց ոչ աւել և ոչ պակաս—երկու տարուց յետոյ, այն էլ երբ այս ու այն կողմից էլեքտրական թել կպցրին այդ նիրհած մարմնին և մի քանի վայրկեան ոտքի կանգնեցրին։ Ընդհանուր ժողովը անցեալ տարի քննեց մասնաժողովի կազմած կանոնադրութիւնը և պատիրեց նրան ներկայացնել ում հարկն է ի հաստատութիւն։ Այժմ անցել է երկար ժամանակ, և մենք չգիտենք այդ մասնաժողովը կատարել է ընդհանուր ժողովի պատուէրը, թէ ոչ։ Եթէ կատարել է, պարտաւոր է այս մասին ազդարարել, իսկ եթէ չի կատարել և նորից ընկղմվել է լետարգիական քնի մէջ, արդեօք ճըր պէտք է զարթնի։

Շատ տխուր և ցաւալի է տեսնել, որ մեզանում ամեն մի օգտաւէտ ձեռնարկութիւն գլուխ չեկած՝ ընկնում է մեր անփութութեան չնորհով։ Այսպէս եղաւ թատրոնական «ակմբի վիճակը, և շատ վշտալի կլինի, եթէ նոյն չար բախտին արժանանայ և մեր գրականական ֆոնդը։

---

## գեղարուեստ

ԹԱՏՐՈՆ, ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Թէ որքան թատրոնական ուցեն-զենտները միմեանց կարող են հակասել, այդ երևում է „Нов. Обозрѣніе“ և „Кавказъ“ լրագրների տպած կարծիքներից Թիֆլիսեցի հայածին ռուս դերասան Դարակիի (Պաարով) խաղի մասին։ Դարակին ամսոյս 20-ին Թիֆլիսի արտիստիքական փքուն անունը կրող ընկերութեան բեմի վրայ պատրաստ է ևկել Դիմայի «Բին» պիէսի գլխաւոր դերում։ Եւ ահա յիշեալ լրագրները տեսէք ինչ հակառակ կարծիք են յայտնում նրա մասին։

„Нов. Обоз.“, խոնատանալով միւս անգամ մանրամասն խօսել դերասանի խաղի մասին, առ այժմ միայն գրում է.

«Որքան կարելի է այդ դերից դատել, պ. Դարակին իր գործին լուրջ վերաբերուղ մի դերասան է, որ քիչ աշխատանք գործ չէ դրել իր ըմբռնական ընդունակութիւնները զարգացնելու վրայ։ Նրա խաղը մտածած է և միատեմ չունի չժանդին հիմնական գծերը, իսկ դիկցիան (առոգանութիւնը) մշակուած է»։

Սրա հակառակ „Кавказъ“ լրագիրը ոմն Нкв-ի (արդեօք Վիկվիկնի Պիկվիկը չէ սա) տալիս է Դարակիի խաղի մասին մի երկար ու բարակ հաշիւ, ուր նա չէ խնայում ոչ մի խօսք դերասանին նսեմացնելու համար։ Ահա՝ ի միջի այլոց՝ ինչ է ասում այդ անյայտ ռեցենզենտը. «Դարակին ուսերն չըդիտէ։ Նա խօսում է ռուս լսելիքի համար անախորժ ակցենտով, լեզուն բաւական թլուած է։ Դարակին յանդուգն է, որ այդ տեսակ թերութիւններով բեմ է դուրս գալիս»։

Մենք երբեք, շարունակում է Պիկվիկը, այդչափ վատ բեն չենք տեսել և երբեք ոչ մի նշանաւոր դերասանի մէջ չենք տեսել այդչափ ինքնահաւանութիւն և ազլոմը։ Մի բեն, որ առաջին գործողութեում պահում էր իրան ինչպես մի տեսակ պայեաց (խեղկատակ) կամ վատ տոն ունեցող փաո։ Մի բեն, որ ելևէնայէ հետ տեսարանի մէջ ուրիշ ոչինչ չէ արտայայտում, բացի խեղկատակութիւնից։ Մի բեն, որ ոչ մի յուզում չէ տալիս, և ոչ մի ակնարկով անգամ չէ ցոյց տալիս «հանճարեղ շւայտութիւն» կամ «շւայտ հանճար» և այլն և այլն։ Ահա Դարակին»։

Այժմ հարցնում ենք, այդ լրագրների ընթերցողները ինչ գաղափար պէտք է կազմեն մի դերասանի մասին, որի վերաբերմամբ այդքան հակառակ կարծիք են յայտնում։ Մենք կասկած չունենք, որ ամենքը կըհաւատան „Кавказъ“-ի Պիկվիկին, այն „Кавказъ“-ի, որ վեցչին ժամանակ առանց ղեկի և ղեկավարի ընթանում է այն կողմ, ինչ կողմ քամին փչում է և որի համար, ինչպէս չատ ճիշդ նկատել էր մի տեղական ռուս լրագիր, ոչինչ չարժէ այսօր մեկին մինչև հօթերորդ երկինք բարձրացնել, վաղը ցեխոտել։ Վերջապէս, այն „Кавказъ“-ի, որի գլխաւոր աշխատակիցներն են Խոնիի Տարտարէնները, որոնք թղթի վահաններով և չարդի նիզակներով ուզում են երկաթէ պատեր քանդել։

---

Առաջիկայ ապրիլի 22-ին Վենետիկում կըբացուի միջազգային գեղարուեստական ցուցահանդէս։ Դա առաջին միջազգային ցուցահանդէսն է ամբողջ Իտալիայում։ Որպէս դի հասարակ, անչնորհ նկարներ չըժողովին ցուցահանդէսը, որոշուած է ընդունել 400-ից ոչ աւելի ընտիր նկարներ։ Ցուցահանդէսը կըտևէ մինչև հոկտեմբերի 22-ը։

---

Հռչակաւոր Մադինին Թիֆլիսում սպասւում է մօտաւորապէս ապրիլի կիսին։ Թիֆլիսում նա կըտայ միայն մի կոնցերտ, մի մի կոնցերտ էլ Բագուում և Բութայիսում, եթէ բացած բաժանորդագրութիւնը յաջողի։ Չենք կարող չընկատել, որ Թիֆլիսի իմպրեսարիօ պ. Միրիմանեանը չափազանց թանդ է նշանակել տեղերի գները, մէկ որքան թանդ – այդ մասին բաւական է ասել, որ ամենավերջին տեղը պարտերում արժէ 3 րուբլուց աւելի, իսկ դալլերէյում 2 ր.։

---

## մանր լուրեր

«Times»-ը տպագրել է իր ընթերցիկի տեղեկութիւնները, որը անձամբ հետազոտել է տաճիկների գաղանութիւնները հայերի վերաբերմամբ։ Այդ տեղեկութիւնները հաստատում են տաճիկների հայերի վերաբերմամբ ցոյց տուած խստասիրտ յարաբերութեան ամենասոսկալի փաստերը, որոնք արդէն լոյս են հանած Լորդ Կիմբերլէին (անգլիական արտաքին գործերի նախարար) Անգլօ-հայկական ընկերութեան կողմից մի պատգամաւորութիւն է ներկայացել

և խնդրել է հայերի օգտին միջոցներ ձեռք առնել։ Կիմբէրլէյը պատգամաւորութեանը արտայայտել է ջերմ համակրութիւն, ցոյց է տուել այն դժուարութիւնները, որոնց հետ կապուած է հայոց հարցը այն պատճառով, որ անհրաժեշտ է խոյս տալ այն բոլորից ինչ որ կարող է նորից զարթեցնել արևելեան հարցը։ Անգլիայի առանձնակի գործունէութիւնը կարող է բաւական չլինել հայոց հարցը վրճռելու համար, բայց Պոլսի անգլիական դեսպանը հաւատացնում է, որ Ռուսաստանը և Ֆրանսիան նոյնպէս լիովին համոզուած են, որ Հայաստանում անհրաժեշտ են վերանորոգութիւններ։ Կիմբէրլէյը հաւատացած է որ երբ ժամանակը կը հասնի, յիշեալ տէրութիւնները Անգլիային ցոյց կը տան սրտագին աջակցութիւն։ Ռուսաստանը երկրի ներկայ վիճակը համարում է անպայման վտանգաւոր։ Նա նոյնպէս ցանկանում է այդ վտանգի առաջն առնել, որչափ Անգլիան և Գերմանիան։ Հէնց որ ժամանակը կը հասնի, Գերմանիան ուրիշ տէրութիւններից յետ չի մնայ։ Եթէ հայերին կառավարեն արդարութեամբ, նրանք սուլթանի ամենից կողմնակիցները կը լինեն։

«Ծիլմէր»

—

«Daily Telegraph»-ը տպագրել է իր թղթակցի երկու նոր և ընդարձակ հեռագիրները Մուշից Վարսի վրայով։ Առաջին հեռագրում հաղորդւում են տաճիկների յանցաւոր գործողութիւնների մանրամասնութիւնները, երկրորդում թղթակիցը հաղորդում է նոր թարգմանի Մուշ գալու մասին, որի չնորհով կ՚ենին, մասնաժողովի հարցաքննութիւնները աւելի աշող են ընթանում։ Վկաների թիւը ահագին է և նրանց բոլոր ցուցմունքները համապատասխանում են նախկին հաւաքած ցուցմունքներին և հաղորդածներին, այնպէս որ անգլիական կառավարութեանը ուրիշ ոչինչ չէ մնում, եթէ ոչ Սասունի սպանութիւնները ապացուցած համարել, իսկ մասնաժողովի գործը պէտք է ընդհատել իբրև իր նպատակին հասած։ Հէնց որ ժամանակը ների, մասնաժողովը կուզևորւի Կէյկուզան հետազօտելու այն չորս վիսակը, որոնք լցած են սպանուածների դիակներով, նոյնպէս և Նայելու Սասունի չրջանի այրուած գիւղերը։

„Нов. Обоз.“

—

«Central News»-ը հաղորդում է, որ մարտի 6-ին Բուխարեստից Լոնդոն է հասել յատկապէս Ստիֆենսօնի մօտ ղրկուած մի պատգամաւոր, որ իր հետ բերել է 1000 ֆ. ստերլինգ (մօտ 9000 ր.) Անգլօ-հայկական ընկերութեան ծախքերի համար։ Նոյն անձը իր հետ բերել է շատ կարևոր դօկումենտներ Սասունի դէպքերի վերաբերմամբ, նաև մի չնորհակալական ուղերձ Ստիֆենսօնին յօգուտ դժբախտ հայերի նրա ցոյց տուած համակրութեան համար։

—

25 հայ ընտանիքներ գնացել են Պետերբուրգ՝ խնդրում են իրանց ընդունել ռուսաց հովանաւորութեան ներքոյ։ Նրանք հաւատացնում են, որ անհնարին է իրանց համար ապրել օսմանեան իշխանութեան ներքոյ իբրև քրիստոնեաների։

„Standart“

—

„Новости“ լրագրին Լոնդոնից հաղորդում են իբրև լուր, թէ Կ. Պոլսում կրկայանայ հայոց հարցի վերաբերմամբ մի կոնֆերենցիա (դեսպանաժողով)։

—

Կ. Պոլսի հայոց պատրիարք Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանի գովելի քաղաքականութիւնն իր հօտի վերաբերմամբ, գրաւել է ամբողջ հայ ազգի համակրութիւնը և ամեն տեղից նրան ուղարկում են չնորհաւորական ուղերձներ։ Նորերս Թիֆլիսից ևս գնաց բազմաթիւ ստորագրութիւններով մի ուղերձ հայ հոգևորականութեան այժմեան հազուագիւտ պարզի։ Պատրիարքը մի նամակով չնորհակալութիւն է յայտնել ուղերձ ուղարկողներին, յայտնելով, մի և նոյն ժամանակ, որ ինքը ոչ մի ջանք չի խնայիլ իր հօտի ապահովութեան համար։

—

„Нов. Обоз.“ լրագրի յատուկ Թղթակիցը չարունակում է Լոնդոնից հաղորդել վերին աստիճանի հետաքրքրական տեղեկութիւններ հայոց գործերի մասին։ Ինչպէս երևում է թղթակցի դրուծներից, Անգլօ-հայկական ընկերութիւնը օրից օր ընդարձակ ծաւալ է ստանում Անգլիայում։ Բացի Սէինդէնից, ուրիշ քաղաքներում ևս սկսել են հիմնուել ընկերութեան ճիւղեր, գլխաւորապէս հոգևորական անձանց չնորհով։ Մարտի $^{9}/_{21}$-ին Բէնկերֆօրդում կայացել է մի միտինգ, որ ուղարկել է արտաքին գործերի նախարար Կիմբէրլէյին տաճկահայերի դրութեան մասին մի բնդրագիր։ Մարտի $^{15}/_{27}$-ին Բիրմինգամում կրկայանայ մի բազմամարդ միտինգ, Անգլիայի պատասխանատուներին վերաբերմամբ Հայաստանի վերաբերմամբ քննելու և կառավարութեան կողմից տաճկայ բանուներին վերջ տալու համար միջոցներ ձեռնարկելու վերաբերմամբ մի որոշում կայացնելու մասին։ Ապրիլի 3 ին Լոնդոնում երկու ամսեայ դադարումից յետոյ կրկայանայ Անգլօ-հայկական ընկերութեան նիստը Ստիֆենսօնի նախագահութեամբ։ Այդ ժողովից շատ բան է սպասւում, որովհետև այնտեղ ներկայ կրլինի Մեծ Ծերունին—Գլադստօնը, որ այժմ բաւական առողջացել է։

—

Մինաս Չերազը ֆրանսիական աշխարհագրական ընկերութեան հրաւէրքով Ֆրանսիայի Լիլլ, Նանսի, Նպինալ և Բար-լէ-Դիւկ քաղաքներում կարդացել է դասախօսութիւններ Փոքր Ասիայի հայերի դրութեան և կեանքի պայմանների մասին։ Դասախօսութիւնները լաւ տպաւորութիւն են արել ամեն տեղ և գրաւել ֆրանսիացիների խորին համակրութիւնը դէպի հայ ժողովուրդը։

—

Սուլթանը հրամայել է գաւառական բանտերից արձակել բոլոր հայ հոգևորականներին, ովքեր ձերբակալած էին իբրև քաղաքական յանցաւորներ։ Անգլիական դեսպանը իր առաջին թարգմանի հետ նեղկայ է եղել Սուլթանի պալատում տեղի ունեցած Իֆթարում, որից յետոյ նա մասնաւոր կերպով ընդունուել է սուլթանի մօտ։

—

Անգլիական համայնքների ժողովի մարտի $^{9}/_{21}$-ի նիստում պարլամենտի անդամ Շաննը, „Нов. Обоз.“-ի Լոն-

դոնի յատուկ թղթակցի ասելով, հարցրել է կառավարութեանը, արդեօք նա հրաւիրել է ռուսաց և ֆրանսիական պետութիւններին Անգլիայի հետ ձեռք ձեռքի տալ՝ տաճիկների փոքր Ասիայում այժմ ևս չարունակող բռնութիւններին և սպանութիւններին վերջ տալու, որոնց մասին չատ փաստեր է հաղորդում „Daily Telegraph“ լրագրի յատուկ թղթակիցը Խնամաբերդից։ Նախ քան Լ. Գրէյի այս հարցին պատասխան տալը, տեղից վերկացաւ ոչ անյայտ թրքասէր Ահմեդ Բարալէտը և ասաց. «Ես կամենում եմ իմանալ պալատի պատկառելի անդամ Մ. Շեանենը ունէ արդեօք իրաւունք այսպէս հարց զարթեցնելու այն բարբարոսական գործողութիւնների մասին, որոնց վերապրում են մեր բարեկամ տէրութեանը (Տաճկաստանին)»։ Պատասխանելով Շեանենի հարցին, Էդ. Գրէյը նկատեց որ Հայաստանում տիրող ծանր վիճակի վերաբերմամբ անգլիական կառավարութիւնը, հիւպատոսական զեկուցումների հիման վրայ, առանձին առաջարկութիւն է արել Բ. Դրանը։ «Ես կարող եմ հաւատացնել իմ պատկառելի բարեկամին (Շեաննին), աւելացրեց Գրէյը, որ Նորին Կայսերական մեծութիւն անգլիական թագուհու կառավարութիւնը կանգ չի առնի ոչ մի ջանքի առջև, որպէս զի ձեռք բերի միւս տէրութիւնների աջակցութիւնը Հայաստանում բարենորոգումներ մտցնելու համար»։ Թրքասէր Բարալէտը Նորից տեղից վերկացաւ և հարց առաջարկեց Գրէյին, թէ արդեօք վերջինը կարող է վաւերացնել, որ եւրոպական միւս տէրութիւնները, ինչպէս Գերմանիան, Աւստրիան և Իտալիան հրաժարւել են Բ. Դրան վրայ ճնշում գործելուց և եթէ այսպէս է, արդեօք ինչու են հրաժարւել։ Այս հարցի հետևանքն այն եղաւ, որ պալատի նախագահը (սպիկեր) կարդի հրաւիրեց չափից դուրս թրքամոլութիւն անող սէր Բարալէտին։

—

*Հաստատ աղբիւրներից մեզ հաղորդում են հետևեալը.*

«Թիւրքաց կառավարութիւնը պահանջում է Համիդիէ զինուորներից, որ նրանք ժողովւեն և պատրաստ լինեն։ Բայց համիդիէները, լսելով այս բանը, բոլորն էլ ցրւել են իրանց բնակավայրերից և փախել են Պարսկաստան կամ Թիւրքիայի միւս նահանգները, տանելով իրանց հետ իրանց ղէնքերը։

Կառավարութեան պահանջին նրանք պատասխանում են, թէ այս երեք տարւայ համար նրանց պէտք է հասնէր ռոճիկ, որը չեն ստացել։ Երբ այս ռոճիկը լիովին կըտան նրանց, նրանք էլ կըհպատակւեն կառավարութեան հրամանին»։

«Մշակ»

—

Հայերի տւած ցուցմունքներից երևում է, որ իրանք մեղաւոր են այն բանում, որ մի փոքր դիմադրութիւն են ցոյց տւել քիւրդերի արշաւանքին։ Նահանգապետ Թաքսին-փաշա այդ բանը ապստամբութիւն համարելով՝ հրամայեց իր զինւորներին կոտորել հայերին։ Ագգաբնակութիւնը ապաւինեց Անդօք լեռը, բայց երբ փաշան նրանց խոստացաւ թիւրք զինւորների հովանաւորութիւնը, 300 անձինք, հաչելով նաև բազմաթիւ կանանց և մանուկներին, ներկայացան թիւրք գընդապետին, որը դրժելով իր տւած խօսքը, այդ թշւառներին հրամայեց կոտորել և գցել նրանց դիակները փոսերի մէջ։

Daily Telegraph

—

Գարահիսարում, որ գտնւում է Սիւասի վիլայէթի չրջանում, տեղի են ունեցել խառնակութիւններ, նոյնպիսի խառնակութիւններ տեղի են ունեցել և երեք ամիս սրանից առաջ։ Հայերից չատերը սպանւած և վիրաւորւած են։

Ռէյտէր

—

Երեք ամիս սրանից առաջ Ամասիայում բանտարկւեցին 150 հայեր, որոնց մեղադրում էին յեղափոխական չարժումների մէջ։ Այն օրից, երբ հրատարակւեց սուլթանի իրադէն, որով ներում էր չնորհւում քաղաքական բանտարկեալներին, Ամասիայի նահանգապետ Բեքիր փաշան արձակեց 50 մարդ և թողնց 100 մարդ բանտում, միայն նրանց դրութիւնը լաւացնելով։ Բանտի աներեակները, որոնք, գտնւում էին անառողջապահիկ պայմաններում, և բանտարկեալները, որոնք մինչև այն ժամանակ ենթարկւում էին բազմաթիւ տանջանքների, աւելի լաւ պայմանների մէջ դրւեցին։

—

Ահա թէ ինչ կարծիք ունի ոսոիկ. մինիստր Նազիմ փաշան հայոց ագիտացիայի մասին։

Հայոց հարցի մասին հիշտ տեղեկութիւններ կիմացւին միայն մի քանի ամիսներից յետոյ, ասել է Նազիմը—և այն ժամանակ ամբողջ Եւրոպան ապշած կըմնայ, որ այդքան համակրութիւն է ցոյց տրւում այնպիսի մարդկանց, որոնք ձգտում էին անարխիական յաղթանակին։ Եւ յիրաւի՝ Լոնդոնում, Մանչեսթրում և Ամերիկայում մեքենայութիւններ լարող «Հնչակեան» մասնաժողովը ամենևին չէ աշխատում հայերի վերածնութեան համար, այլ կործանում է նրանց իր անարխիական վարդապետութիւններով։ Իսկ հայերից նրանց, որոնք հաւատարիմ են մնում իրանց կառավարութիւններին, մասնաժողովի անդամները մահւան են դատապարտում։ Վերջին վեց տարիների ընթացքում «Հնչակեան» կոնսակցութեան ձեռքով ըսպանւած են մօտ հազար հայեր, և և որոնց անունները յայտնի են թիւրքաց կառավարութեանը։

Նազիմի ասելով՝ հռչակաւոր Համբարձումը յանցաւորների խմբի անդամ էր Կ. Պոլսում։ Երկու տարուց յետոյ նա ընկերների հետ ապստամբութիւն յարուցեց Գում-Գափում և ասպա սպանեց հայ վաստակաւոր Խաչիկ էֆէնդիին, որովհետև սա հրաժարւեց մասնակցել անարխիական մեքենայութիւններին։ Վերջը նա ըսպանեց երկու քահանաների և ապա փախաւ Ժնէվ, ուր այն ժամանակ գտնւում էր Խաչիկը, և ասպա Աթէնք։ Այնտեղից նա, թիւրք չոր հագած և Մուրադ անունով գնաց Անատոլիա, ուր հանդիպեց իր եղբօրը՝ Փիրայիին։ Այդ երկու եղբայրները յեղափոխական չարժում առաջացրին իրանց հայրենիքում, բայց չարժումը ճնշւեց և նրանք փախան։ Փիրայրը, սակայն, չուտով կալանաւորւեց և մահւան պատիժ կրնէց, բայց Համբարձումը չարունակեց նախ Մուշում, ապա

քիւրդերի մէջ, և վերջապէս կրկին հայերի մէջ։ Վերջիններին նա հաւատացնում էր որ նրանք կարող են յոյս դնել Անգլիայի վրայ։ Այս անգամ սակայն, աջողուեց կալանաւորել Համբարձումին և նա իր պատիժը կրեց դահճի ձեռքից։

Berl. Tagebl.

—

Եւրոպական մի քանի տէրութիւնների ներկայացուցիչների մէջ Կ. Պոլսում տեղի է ունեցել կարծիքների հաղորդակցութիւն հայոց հարցի մասին։

Новости

—

Times-ը պատմում է, որ Թոխաթում գտնւում է մի կիսախելագար տաճիկ Դալի-Մահմէդ անունով, որին տաճիկները քիչ է մնում մարգարէ համարեն։ Այդ վայրենին փողոցները պտտելով, մահմեդականներին դրգռում է հայերի և գեաւուրների դէմ։ Շատ դիւնորներ նրան հովանաւորում են, մինչև անգամ զէնք են տալիս։ Նորերս, զինւորներից խրատխռւսւած, նա յարձակւեց մի հայի վրայ և, եթէ կըսպանէր նրան, եթէ հայը չըթագնւէր մի տան։ Այդ մասին հաղորդւեց վալիին, և սա խելագարին աքսորեց քաղաքից։ Բայց Դալի-Մահմէդը դարձեալ վերադարձաւ, և այժմ նորից զրգռում է տաճիկներին հայերի դէմ, որոնց նա տուում է։

—

«Մուշի ս. Կարապետ վանքի միաբանութեան ներկայացուցիչները, քննիչ յանձնաժողովին ներկայանալով յայտնել են, որ հայերը կատարելապէս զոհ են Թիւրքաց կառավարութեան»։ Ս. Կարապետի վանքի միաբանութեան այդ վարմունքը, ինչպէս երևում է մեր ստացած տեղեկութիւններից, վերին աստիճանի ծանր տպաւորութիւն է թողել Կ. Պոլսում։ Հայոց հոգևորականութեան բարոյական անկումը, ինչպէս երևում է, սահման չունի։

«Մշակ»

—

Տաճկի կառավարութիւնը դադարեցրել է «Արևելք» լրագիրը։

—

Երդեհալ դատաւորների հարցը քննող մանաժողովը Ռուսաստանում, քննելով երդեհալների կազմակերպութեան ներքայ պայմանները, նրա մէջ շատ անհրաժեշտ փոփոխութիւններ է մտցրել։

—

Թիֆլիսի երաժտութիւնները նոր քաղաքագլխի պաշտօնի համար է նախապատրաստում Նախկին քաղաքագլուխ իշխ. Ն. Աբզուբեան-Երևանբաղուկին, Մ. Թամամշեանին, Կ. Ալիխանովին, պրօֆ. Պ. Վամբերիին և այլոց։

Ընտրութիւնը որոշած է նշանակել ապրիլի 24-ին։

—

Մողնու եկեղեցու նոր երեցփոխ ընտրուեց՝ հրաժարած Ա. Վարդապետեանի փոխարէն՝ Բ. Ալիբէգեան։

—

Հայ-կաթոլիկ Յովհ. Վ. Յուրիկեան դարձել է մայրենի եկեղեցու զաւակը։

—

Եպարքեան վճռել է դադարեցնել երթերի պատերազմը Չինաստանի դէմ։ Աւելի չինական զօրապետ Լի-Հունդ-Չանգի կեանքի դէմ սպանութեան փորձն է։ Վերջինս եպարքեա էր դնացել կանչու հաշտութեան պայմանները, սակայն վերադարձել է ծանրապէս վիրաւորուելոց առաջնակարգ դնդակից, որը ճնացել է Լի-Հունդ-Չանգի աչքի նեղքին մասում։ Զարադործը ևս մահւան հետ պատացայ է։ Այս դէպքը խիստ ծանր տպաւորութիւն է թողել քաղաքական շրջանների մէջ և այժմ պաշտօնապէս հաստատւում է պատերազմի դադարեցման լուրը։

—

Ռուսաց կայսրը ընդհանուր է անցկացել փետրուարի 14-ին ամենազօրամատակարար Թոյլ տալ Էջմիածնի սինոդի անդամներին՝ Արխատակէս Սեդրակեան և Սարգիս Եպիսկոպոսներին ընդունել և կրել պատշաճական Մէջիդիէ 2-րդ աստիճանի շքանշանը աստղով և նոյն շքանշանի 3-րդ աստիճանը Մեսրովբ և Եփրեմ վարդապետներին։

—

Ֆրանսիացի դրամատէրերը մտադիր են Երուսաղէմից մինչև Ղարս երկաթուղի շինել և ներկայումս նրանք Կ. Պոլսում աշխատում են լրատուներ ձեռք բերել։ Երուսաղէմից շինելիքը երկաթուղին կանցնի ամբողջ Պաղեստինով և փորը Ասիայի վրայով մինչև Անդրկովկաս։ Վերջին կէտը կըլինի Ղարսը։

—

„Тиф. Листокъ“ լրագրի աշխատակից նախկին դերասան Պալմը (Արբենին) Թոլուսուզի թատրոնում հրատարակել մի լրագիր՝ „Черноморскій Вѣстникъ“ անունով։

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ա. Լաւ լաւ։ Սիլանեին։ Մենք ոչ որի առիթ չենք տալիս մեզ հետ բանակցելու։ Բայց երբ առանց որևէ պատճառի սիսում են մեզ զրպարտել, այն ժամանակ լռելն աւելորդ ենք համարում։ Համերաշխութիւնն ասած բանը այն ժամանակ միայն կարող է գոյութիւն ունենալ երկու օրգանների մէջ, երբ նրանք միատեսակ են մտածում և միևնոյն հայեացքն ունեն զրակատնական խնդիրի մասին։

Խնդրում ենք հաղորդիչը ձեր ինքնահաւոյին, որ «Տարազ» ուղարկենք։

---

Ժամանակ. խմբագիր-հրատարակիչ՝
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ

---

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՆԵՐԿԱՅ ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մանկավարժական ԱՂԲԻՒՐ ամսագրի և պատկերազարդ ՏԱՐԱԶ չաբաթաթերթի

Աղբիւրի տարեկան բաժանորդագինը 3 ր. (արտասահմանից 4 ր.), իսկ Տարազինը 6 ր. (արտասահմանից 10 ր.) Խմբագրութիւնը (Գօլովինսկի պրօսպեկտ, տ. № 7 Կայսեր. Երաժշ. Ընկեր. Հանդեպ) բաց է ամեն օր, բացի տօն և կիրակի օրերից, առաւօտեան 10 ժամից մինչև 2-ը կէսօրից յետոյ։ Ընդունուած յօդուածները կրճատւում են, փոփոխւում, չըտպագրելի երեք թերթից սակաւ յօդուածները և ոտանաւորները չեն վերադարձնւում։

# ОТКРЫТА ПОДПИСКА НА ЖУРНАЛЪ

# 1856 г. НОВЬ 1895 г.

СЪ БЕЗПЛАТНЫМЪ ПРИЛОЖЕНІЕМЪ 12-ти ПЕРЕПЛЕТЕННЫХЪ ТОМОВЪ

## ПОЛНАГО СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ

# А. Ѳ. ПИСЕМСКАГО

## ЗА 14 РУБЛЕЙ

**Подписчики получаютъ съ доставкою и пересылкою** во всѣ мѣста Россійской Имперіи, безъ всякой доплаты за пересылку преміи:

1) **ЖУРНАЛЪ**

**НОВЬ**

24 выпуска въ форматѣ наибольшихъ европейскихъ иллюстрацій.

2) особый иллюстрированный отдѣлъ

**МОЗАИКА**

(24 выпуска),

**составляющій самостоятельный журналъ по прикладнымъ знаніямъ, вмѣщающій въ себѣ 16 рубрикъ.**

3) **ЖУРНАЛЪ ЛИТЕРАТУРНЫЕ**

**СЕМЕЙНЫЕ ВЕЧЕРА**

12 ежемесячныхъ книжекъ романовъ и повѣстей.

4) ДВѢ НОВЫЯ КНИГИ ФОРМАТА IN-FOLIO

## „ЖИВОПИСНОЙ РОССІИ“

Отечество наше въ его земельномъ, историческомъ, племенномъ, экономическомъ и бытовомъ значеніи,

**ВЪ ДВУХЪ РОСКОШНЫХЪ КОЛЕНКОРОВЫХЪ ПЕРЕПЛЕТАХЪ**

**5) 12 ТОМОВЪ новаго изданія полнаго собранія сочиненій**

А. Ѳ. ПИСЕМСКАГО

*ГОДОВАЯ ПОДПИСНАЯ ЦѢНА* за всѣ вышеобъявленныя изданія вмѣстѣ съ пересылкою во всѣ мѣста Россійской Имперіи безъ всякой доплаты за пересылку прем. **14 р.**

Допускается подписка на „НОВЬ“ съ разсрочкою платежа на слѣдующихъ условіяхъ:

*I. Для частныхъ лицъ, подписывающихся на одинъ экземпляръ:* При самой подпискѣ высылается или вносится не менѣе двухъ рублей, а затѣмъ представляется на усмотрѣніе подписчика высылать или по 1 рублю ежемѣсячно, или по 2 рубля каждые два мѣсяца, или по 3 рубля каждые три мѣсяца, или, наконецъ, по 9, 5, 6, 7 рублей каждые четыре, пять шесть, семь мѣсяцевъ—до полной уплаты всей годовой подписной цѣны, т.-е. 14 рублей. *Безплатныя преміи, т.-е. 12 переплетенныхъ томовъ сочиненій Писемскаго и 2 новыя переплетенныя книги „Живописной Россіи“,* высылаются или выдаются подписчику только *по уплатѣ всѣхъ 14 рублей.*

*II. Для казенныхъ и общественныхъ учрежденій, подписывающихся на нѣсколько экземпляровъ:* При самой подпискѣ высылаются или вносятся *за каждаго подписчика не менѣе 4 рублей.* Затѣмъ слѣдующіе взносы денегъ могутъ быть производимы частями и въ сроки по усмотрѣнію самаго учрежденія, съ тѣмъ, однако, непремѣннымъ условіемъ, чтобы деньги за годовую подписку всѣхъ подписчиковъ были полностію уплачены не позже 1-го октября 1895 года. Учрежденія не выславшія всѣхъ книгъ къ этому сроку, лишаются права получить безплатныя преміи. *Безплатныя преміи т.-е. 12 переплетенныхъ томовъ сочиненій Писемскаго и 2 новыя переплетенныя книги „Живописной Россіи“,* высылаются или выдаются подписчикамъ только *по уплатѣ всѣхъ 14 рублей.*

Подписка принимается исключительно въ книжныхъ магазинахъ Товарищества М. О. ВОЛЬФЪ въ С.-Петербургѣ, Гостиный дворъ, № 18; въ Москвѣ, Кузнецкій мостъ, № 12, и въ редакціи „НОВИ“ въ С.-Петербургѣ, Васильевскій Островъ, 16 линія, собств. д. № 5—7.

*Редакторъ и издатель Александръ Маврикіевичъ ВОЛЬФЪ.*


Доз. ценз. Тифлисъ 25-го марта 1895 г. тип. Груз. Изд.тов. Лорисъ-Мелик. ул. д. № 13.